**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2019թ. թիվ 545-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշման պահանջների՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պարտականությունների կատարող Աննա Գասպարյանին:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին՝

1) Ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը:

2) Տեղեկատվություն փնտրողին մատչելի ձևով պարզաբանել տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը:

3) Մշակել ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարին:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. փետրվարի 27-ի թիվ 67-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

18/09/19

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 18
ք.Վանաձոր